ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԾԳՀ-ԾՁԲ-2022/1

ք. Երևան «21» մարտի 2022թ.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը» ի դեմս հիմնադրամի տնօրեն Ա. Սողոմոնյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Գարանտ Մոտորս»** ՍՊԸ –ն, ի դեմս տնօրեն **Ս.Հովհաննիսյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության

իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում **մինչև 1,900,000 (մեկ միլիոն ինը հարյուր հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:[20]

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[20] *Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:*

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: **Հավելված 1-ում նշված դիագնոստիկ զննման ենթարկված մեքենայի մասին տեղեկատվությունը պետք է ներկայացվի գրավոր՝ մասնագետի կողմից ստերագրված և ընկերության կնիքով վավերացված փաստաթղթով:**

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1 N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	«Գարանտ Մոթորս» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	ք.Երևան,Թբիլիսյան խճ 20
ՀՎՀՀ՝00846441	«Արդշինբանկ»ՓԲԸ
Հ/Հ՝ 900000900283	Հ/Հ 2470075092810000
Կենտրոնական գանձապետարան	ՀՎՀՀ 01310872
Գործադիր տնօրեն՝	Տնօրեն
Արթուր Սողոմոնյան	Սոֆի Հովհաննիսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.S	Կ.S

Հավելված N 1
«21» մարտ 2022 թ. կնքված
ՊԾԳՀ-ԾՁԲ-2022/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	50111130/3	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	Դրամ	1,900,000	1	Կատարողի կողմից նշված հասցեում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 26.12.2022թ

Տեխսպասարկման կայանը պետք է հագեցած լինի առնվազն հինգ ամբարձիչներով (домкрат)՝ առնվազն երկուս ու կես տոննա բարձրացնելու կարողությամբ:
Ծառայությունները պետք է մատուցվեն տրանսպորտային միջոցը տեխսպասարկման կայանում գրանցելու օրվանից՝ առնվազն մեկից-հինգ օրացուցային օրվա ընթացքում/կախված ավտոմեքենայի անսարքությունից/, եթե փոխհամաձայնությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:
Ավտոնեքենայի գրանցումը անհրաժեշտ աշխատանքների ծավալի գնահատումը և կատարման ժամկետները հաստատվում են կողմերի միջև էլեկտրոնային փաստաթղթի միջոցով:
Տեխսպասարկամ կայանը պետք է տեղակայված լինի Երևանում՝ կահավորված ավտովերանորոգման համապատասխան սարքավորումներով /վուլկանացնող, կարգավորող, ախտորոշիչ և այլ սարքեր/:
Տեխսպասարկման կայանը պետք է ունենա խափանված մեքենայի մասին տեղեկություն ստանալուց հետո տեխսպասարկման կայանից դեպի խափանման (վթարի) վայր դուրս գալու և իր միջոցներով, քարշակով ավտոմեքենան վերանորոգման կայան տեղափոխելու հնարավորություն:
Տեխսպասարկումն իրականացնող կայանը պետք է՝

- ունենա առանձնացված յոթ և ավելի աշխատանքային տարածքներ /«բոքսեր»/՝ նախատեսված առանձին համակարգերի վերանորոգման համար, յուրաքանչյուր տարածքում միաժամանակ առնվազն երեք մեքենայի վրա աշխատելու հնարավորությամբ,
- կատարի շարժիչի, ուժային և ղեկավարման համակարգերի, ընթացքային մասի և թափքի, ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ վերանորոգման, տեխնիկական սպասարկման աշխատանքներ և կահավորված լինի անհրաժեշտ սարքավորումներով,
- ունենա էլեկտրոնային և էլեկտրական բնույթի խափանումները վերացնելու հնարավորություն,
- ունենա ծրագրեր և տեխնիկական գրականություն՝ ախտորոշում կատարելու կատարվող աշխատանքների վրա ինժեներական վերահսկողություն իրականացնելու համար:

Տեխսպասարկման կայանը պետք է ունենա կահավորված սպասասրահ սանհանգույցներով:
Առանձին դեպքերում՝ կախված վերանորոգման ծավալից և արժեքից /օրինակ՝ շարժիչի վերանորոգում/, կողմերը փոխհամաձայնությամբ կարող են նախատեսել

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____»«_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 1.1
« 21 » մարտ 2022 թ. կնքված
ՊԾԳՀ-ԾՁԲ-2022/1 ծածկագրով պայմանգրի

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած
հանրագումարային գին 4,521,230

SU-1,SU-2 ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումն		հավելված 1.1	
		Renault Sandero 1.6 2016թ ՄՓՏ	Renault Dusster 2.0 2016թ ՄՓՏ 4x4
1	2	3	4
		Հավելված Ա	
SU-1 ներառվող ծառայությունների անվանում		Այլ պետությունների արտադրության մեքենաներ	
1	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	1000	1000
2	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	2000	2000
3	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	5000	5000
4	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	1200	1200
	1.Շարժիչ		
5	Շարժիչի հանում և տեղադրում	100000	100000
6	Շարժիչի վերանորոգում	200000	200000
7	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	30000	30000
8	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	30000	30000
9	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	50000	50000
10	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	50000	50000
11	Շարժիչի գլխիկի վերանորոգում	80000	80000
12	Փականի խցուկի փոխարինում	50000	50000
13	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	30000	30000
14	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	30000	30000
15	Հրիչների փոխարինում SOHC	30000	30000
16	Ատամնավոր փոկի փոխարինում	30000	30000
17	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	30000	30000
18	Մխոցային օղակների փոխարինում	100000	100000
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
19	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	3000	3000
20	Յուղի պոմպի փոխարինում	6000	6000
21	Ղեկավարման բլոկի վերանորոգում	15000	15000
22	Բռնկման կարգավորում	600	600

23	CO կարգավորում	600	600
24	Օդի զտիչի փոխարինում	2000	2000
25	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	10000	10000
26	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	9000	9000
27	Բենզամղիչի փոխարինում	10000	10000
28	Վառելիքի զտիչի փոխարինում	3000	3000
29	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	12000	12000
30	Սրահի զտիչի փոխարինում	2500	2500
	3. Սառեցման և արտածման համակարգ		
31	Հովհարի փոկի հանում և տեղադրում	3500	3500
32	Հովհարի հանում և տեղադրում	6000	6000
33	Ռադիատորի հանում և տեղադրում	10000	10000
34	Ռադիատորի վերանորոգում	38000	38000
35	Թերմոստատի փոխարինում	6000	6000
36	Ջրի պոմպի փոխարինում	6000	6000
37	Ընդարձակող բաքի փոխարինում	2500	2500
38	Խլարարի հանում և տեղադրում	3000	3000
39	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	5000	5000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
40	ՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում	4000	4000
41	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	40000	40000
42	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	6300	6300
43	Բանվորական կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	5000	5000
44	Բանվորական կամ գլխ. գլանի վերանորոգում	5000	5000
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
45	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	4000	6000
46	Կարդանային լիսեռի վերանորոգում	1000	1000
47	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	4000	6500
48	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	8000	8000
	6. Կախոց		
49	Տրավերսի հանում և տեղադրում	25000	25000
50	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	7000	7000
51	Անվակունդի առանցքակալի փոխարինում	8000	8000
52	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	8000	8000
53	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	2500	2500
54	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	1000	1000
55	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	3500	3500
56	Զսպանակի հանում և տեղադրում	1500	1500
57	Զսպակի հանում և տեղադրում	2000	2000
58	Զսպակի վռանների փոխարինում	3000	3000
59	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	5500	5500
60	Ներքևի լծակի հանում և տեղադրում	4500	4500
61	Ներքևի լծակի վռանների փոխարինում	4500	4500
62	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	5000	5000
63	Միջին ձգանի հանում և տեղադրում	3500	3500
64	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	3500	3500
65	Վերևի լծակի հանում և տեղադրում	2000	2000

66	Վերևի լծակի վռանների փոխարինում	3000	3000
67	Գնդե հոդակապերի փոխարինում	4500	4500
68	Ծայրակաների հանում և տեղադրում	3000	3000
69	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	1200	1200
70	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	4000	4000
71	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	5000	5000
72	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	5500	5500
73	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	3500	3500
74	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	3500	3500
75	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	7000	2000
76	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	3500	2800
77	Անվաբացքի կարագավորում	10000	10000
	7. Ղեկային մեխանիզմ		
78	Ղեկային կալունի հանում և տեղադրում	16000	16000
79	Ղեկային կալունի վերանորոգում	60000	60000
80	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	2000	2000
81	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	100	100
82	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	3500	3500
83	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	3000	3000
84	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	5000	5000
	8. Արգելակային համակարգ		
85	Գլխ. գլանի հանում և տեղադրում	6500	6500
86	Գլխ. գլանի վերանորոգում	2000	2000
87	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	7000	7000
88	Բանվ. գլանի հանում և տեղադրում	5000	5000
89	Արգելակային համակարգի օդահանում	1800	1800
90	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	4200	4200
91	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	4000	4000
92	Առջևի սուպպորտի վերանորոգում	3500	3500
93	Հետևի սուպպորտի վերանորոգում	4200	4200
94	Արգելակային փողրակի փոխարինում	2800	2800
95	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	3000	3000
96	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	4500	4500
97	Հետևի կոճղակների փոխարինում	5000	5000
98	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	5000	5000
99	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	5000	5000
100	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	1200	1200
101	ABS-ի հանում և տեղադրում	6000	6000
102	ABS-ի վերանորոգում	6000	6000
103	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	6000	6000
104	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	2500	2500
	9. Էլեկտրասարքավորում		
105	Էլեկտրասարքավորման վերանորոգում	5500	5500
106	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	4500	4500
107	Գեներատորի հանում և տեղադրում	9000	9000
108	Գեներատորի վերանորոգում	11000	11000
109	Մեկնարկիչի հանում և տեղադրում	7500	7500
110	Մեկնարկիչի վերանորոգում	8500	8500

111	Առջևի լապտերի հանում և տեղադրում	2500	2500
112	Հետևի լապտերի հանում և տեղադրում	2500	2500
113	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	12000	12000
114	Վազքաչափի հանում և տեղադրում	100	100
115	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	100	100
116	Սաքերի պանելի հանում և տեղադրում	47000	47000
117	Արագաչափի հանում և տեղադրում	1000	1000
118	Ազդանշանի հանում և տեղադրում	4000	4000
119	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում	7000	7000
120	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	4500	4500
121	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	2000	2000
122	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	8000	8000
123	Էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի հանում և տեղադրում	13500	13500
124	Էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի հանում և տեղադրում	12500	12500
125	Էլեկտրական տվիչների փոխարինում	2500	2500
126	Էլեկտրական անջատիչների փոխարինում	2200	2200
127	Վառոցքի մոմերի փոխարինում	7500	7500
128	Կոնդիցիոների լիցքավորում	17500	17500
129	Կոնդիցիոների վերանորոգում	15000	15000
	10. Այլ ծառայություններ		
129	Քարշարկի ծառայություն Երևանից մեջ գին 1կմ, համար	1500	1500
130	Քարշարկի ծառայություն Երևանից դուրս գին 1կմ, համար	320	320
131	Անիվի հանում և տեղադրում	1000	1000
132	Անվադողի վերանորոգում	1000	1000
133	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար	5000	5000
134	Անիվի բայանսավորում	1000	1000
135	CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար	1500	1500
136	Խառատային աշխատանքներ	3000	3000
137	Փականագործի աշխատանքներ	3000	3000
138	Անիվի վալց	4000	4000
		Հավելված՝	
SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները		**տությունների արտադրության մեքե**	
	1.Շարժիչ		
1	Շարժիչի գլխիկ	360000	420000
2	Բարձիկ	60000	80000
3	Շարժիչի գլխիկի միջադիր	15000	15000
4	Շարժիչի բաշխիչ լիսեռ	80000	80000
5	Շարժիչի փական դուրս մղող 1 հատ	8000	8000
6	Շարժիչի փական ներս մղող 1 հատ	5000	5000
7	Շարժիչի փականի խցուկ 1 հատ	1000	1000
8	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	5000	5000
9	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	8000	8000

10	Ծնկածև լիսեռի արմատական ներդիրներ	24000	24000
11	Ծնկածև լիսեռի շարժաթևային ներդիրներ	25000	25000
12	Հենակային տափողակ	10000	10000
13	Մխոց	100000	100000
14	Մխոցային օղակներ	25000	25000
15	Ատամնավոր փոկ ատամնանիվով և հոլովակներով	45000	45000
16	Հիդրոծգան	20000	20000
17	Հրիչ	6000	6000
18	Հիդրոհրիչ	7000	7000
19	Շկիվ	30000	30000
20	Շարժաթև	80000	80000
21	Կարտերի միջադիր	8000	8000
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
22	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	2800	2800
23	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	4000	4000
24	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	5000	5000
25	Յուղի զտիչ	5000	5000
26	Յուղի պոմպ	30000	30000
27	Յուղի ռադիատոր	48000	48000
28	Յուղի փողրակ	12000	12000
29	Վառոցքի մոմ	6000	6000
30	Ինժեկտորի ֆորսունկա	30000	30000
31	Վառելանյութի մղիչ էլեկտրական	70000	68000
32	Վառելանյութի զտիչ	20000	20000
33	Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման	2000	2000
34	Վառելանյութի փողրակ	5500	5500
35	Օդի զտիչ	8000	8000
36	Ջերմաստիճանային տվիչ	7300	7300
37	Յուղի տվիչ	12000	12000
38	Բաշխիչ լիսեռի տվիչ	12000	13000
39	Օդի ծախսի տվիչ	5000	5000
40	Արագաչափի տվիչ	5000	5000
41	Հովհարի տվիչ	14500	14500
42	Ջրի տվիչ	5000	5000
43	Բենզոբաքի տվիչ	32500	32500
44	Մարման ընթացքի կարգավորիչ	5000	5000
45	Մարման ընթացքի տվիչ	5000	5000
46	Ղեկավարման համակարգիչ	120000	120000
47	Պարապ ընթացքի տվիչ	5000	5000
48	Դրոսելային փականի տվիչ	5000	5000
49	Թթվածնի տվիչ	23500	23500
50	Սրահի զտիչ	8500	8500
	3. Սառեցման և արտածման համակարգ		
51	Հովհարի փոկ	5000	5000
52	Հովհար	26500	26500
53	Ռադիատոր	92000	92000
54	Ընդարձակող բաք	20000	20000

55	Ռադիատորի փողրակ	9500	8500
56	Թերմոստատ	16000	16000
57	Ջրի պոմպ	35000	35000
58	Ջրի պոմպի առանցքակալ	5000	5000
59	Սառեցման հեղուկ 1 լիտր	2000	2000
60	Ապակիների մաքրման չսառող հեղուկ 1 լիտր	1500	1500
61	Հոլովակ	20000	20000
62	Փոկ	11000	11000
63	Փոկ կոնդիցիոների	11000	11000
64	Ծորակ	5000	5000
65	Խլարարի ներդիր	6500	6500
66	Խլարարի կախոց	3500	3500
67	Կրոնշտեյն	1000	1000
68	Անուր (Խամուտ)	1500	1500
69	Խլարար	120000	120000
70	Ռեզոնատոր	1000	1000
71	Վառարանի ռադիատոր	60000	60000
	3. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
72	Կցորդման բանվորական գլան	15000	15000
73	Կցորդման գլխավոր գլան	17000	17000
74	Կցորդման տանող սկավառակ	56000	56000
75	Կցորդման տարվող սկավառակ	42000	42000
76	Կցորդման առանցքակալ	26000	26000
77	Կցորդման փողրակ	23000	28000
78	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	6500	6500
79	Հերմետիկ	4000	4000
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
80	Կարդանային լիսեռ	0	125000
81	Էլաստիկ մուֆտ	0	10000
82	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	0	20000
83	Կարդանային լիսեռի խաչուկ	0	15000
	6. Կախոց		
84	Տրավերս	300000	300000
85	Կրոնշտեյն	10000	10000
86	Ձախ կամ աջ հոդակապ	40000	40000
87	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	8000	8000
88	Անվակունդ	36000	36000
89	Անվակունդի խցուկ	43000	43000
90	Անվակունդի ներքին առանցքակալ	28000	28000
91	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	27500	27500
92	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	25000	25000
93	Ձախ կամ աջ հոդակապի խցուկ	6000	6000
94	Հարվածամեղմիչի թասակ	15000	15000
95	Ձսպանակ	20000	20000
96	Առջևի հարվածամեղմիչ	30000	30000
97	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	6000	6000
98	Հարվածամեղմիչի վռան	2000	2000

99	Ներքևի լծակ	25000	25000
100	Ներքևի լծակի վռան	9000	9000
101	Վերևի լծակ	20000	20000
102	Վերևի լծակի վռան	10000	10000
103	Գնդե հոդակապ	14000	14000
104	Առջևի կայունարար	14000	14000
105	Առջևի կայունարարի վռան	6000	6000
106	Առջևի կայունարարի առջևի վռան	2000	2000
107	Հետևի ցնցամեղմիչ	43000	43000
108	Հետևի մետաղաձող (շտանգա)	30000	30000
109	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	6000	6000
110	Հետևի անկյունագծային լծակ	45000	0
111	Անկյունագծային լծակի վռան	5000	5000
112	Աջ կամ ձախ ձգան	14000	15000
113	Ծայրակալ	13000	13000
114	Ձգան մեջտեղի	6500	6500
	7. Ղեկային մեխանիզմ		
115	Ղեկային կալուն	165000	185000
116	Ղեկային կալունի առանցքակալ	32000	36000
117	Ղեկային կալունի խաչուկ	25500	25500
118	Հիդրոուժեղարար	56500	56500
119	Հիդրոուժեղարարի փոկ	8000	8000
120	Հիդրոուժեղարարի պոմպ	45000	45000
121	Ղեկային ձող	15000	15000
122	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	6000	6000
123	Ճոճանակի վռան	5000	5000
	8. Արգելակային համակարգ		
124	Գլխավոր գլան	38000	38000
125	Վակուումային ուժեղարար	42000	42000
126	Բանվորական գլան	12500	12500
127	Արգելակային փողրակ	12000	12000
128	Սուպպորտի ուղղորդիչ	10000	10000
129	Սուպպորտի մանժետ	14000	14000
130	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	16000	16000
131	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	15000	15000
132	Առջևի արգելակային սկավառակ	30000	30000
133	Հետևի արգելակային սկավառակ	49000	49000
134	Ձեռքի արգելակի ճոպան	47000	47000
135	ABS-ի տվիչ	14000	14000
136	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	25500	25500
137	Ձեռքի արգելակի ճոպան	3500	3500
	9. Էլեկտրասարքավորում		
138	Գեներատոր	88000	88000
139	Գեներատորի դիոդային կամրջակ	24500	24500
140	Գեներատորի ռելե	21500	21500
141	Գեներատորի առանցքակալ	11000	11000
142	Ստարտեր	76000	76000
143	Ստարտերի ռելե	15000	15000

144	Ստարտերի ածուխ	16500	16500
145	Բենդեքս	19000	19000
146	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	20500	20500
147	Վառոցքի մոմ	6800	6800
148	Լամպ փոքր	250	250
149	Լամպ միջին	4000	4000
150	Լամպ մեծ	8800	8800
151	էլեկտրական անջատիչ	2500	2500
152	էլեկտրական տվիչ	11500	11500
153	էլեկտրական չափիչ սարք	75500	75500
154	Բռնկման կողպեք	48000	48000
155	էլեկտրալարերի գլխավոր խուրց	120000	120000
156	էլեկտրալարերի երկրորդային խուրց	90,000	90,000
157	Վառոցքի մոմի ծայրակալ	5500	5500
158	Ազդանշան	4000	4000
159	Ապակելվացիչ	6000	6000
160	Ապակելվացիչի շարժիչ	18000	18000
161	էլեկտրաամբարձիչ	45000	45000
162	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորգման համար	5000	5000
	Ընդամենը ծառայություններ	**1627420**	**1626220**
	Ընդամենը ապրանքներ	**4366450**	**4599450**
	Ընդամենն ըստ սյուների	**5993870**	**6225670**
	Ընդամենն ըստ չափաբաժնի	***12219540***	

ԳՆՈՐԴ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900000900283
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն՝
Արթուր Աղոյանյան

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Գարանտ Մոթորս» ՍՊԸ
ք.Երևան,Թբիլիսյան խճ 20
«Արդշինբանկ»ՓԲԸ
Հ/Հ 2470075092810000
ՀՎՀՀ 01310872
Տնօրեն
Սոֆի Հովհաննիսյան

(ստորագրություն)
Կ.Տ